ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐՏԻՆՅԱՆ ԻՆԳԱ ՎԱՀՐԱՄԻ

Կարգավորման եվ ինքնակարգավորման հիմնախնդիրները Հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում(2010-2016 թթ.)

Ժ. 01. 06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՂԱՇ ՆԱՐԻՆԲԵԿԻ**
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՄԱՅԻՍԻ**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎՍԵՓԻ
բանասիրական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. դեկտեմբերի 22-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 25 Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. նոյեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համացանցի զանգվածային հասանելիությունը կանխորոշեց 21-րդ դարի մարդու կենսակերպը և աշխարհի նորացող կերտվածքը: Այսօր արդեն խոսվում է նոր տեխնոլոգիաներից կախվածության մասին: Արևմտյան փորձագետները հիմնականում շոշափում են ավանդական մեդիայի՝ նոր մեդիայի օգտատերերին տրամադրած օպերատիվ տեղեկատվության կիրառության հնարավորությունները և դրանց հավաստիության խնդիրները, իսկ ռուս փորձագետներն անդրադառնում են թվայնացման հետևանքով «ինքնատեղեկացվող հասարակության դարաշրջանի» գոյությանը, որտեղ տեղեկատվության աղբյուրի դերում կարող է լինել համացանցային ցանկացած օգտատեր: Այսօր համացանցը Հայաստանում հիմնական տեղեկատվական աղբյուրներից է, քաղաքական և քաղաքացիական շարժումների յուրատեսակ հարթակ, որին ակտիվորեն ինտեգրվել են սոցիալական ցանցերը և բլոգները: Տեղեկատվական դաշտում շահում են այն ավանդական ԶԼՄ-ները, որոնք ոչ միայն չեն անտեսում այլընտրանքային մեդիահարթակները, չեն ընկալում այն որպես մրցակից, այլև փորձում են օգտագործել նոր մեդիայի ընձեռած հնարավորությունները իրենց ամենօրյա աշխատանքում: Հայաստանի առցանց ԶԼՄ-ները և նոր մեդիան գնում են դեպի միասնական տեղեկատվական դաշտի ստեղծում. սա է վերջին տարիների հիմնական միտումներից մեկը:

Աշխատանքում անդրադարձել ենք նոր մեդիամիջավայրի առանձնահատկություններին, ինքնակարգավորման նորահայտ և գործող սկզբունքներին, մեխանիզմներին, փոփոխվող տեխնոլոգիական աշխարհում հայրենական մեդիամիջավայրի զարգացման միտումներին, էթիկայի սահմանված նորմերին, դրանց կիրառման անհրաժեշտությանը և չկիրառման հնարավոր հետևանքներին: Փորձել ենք սահմանել և ներկայացնել առաջարկություններ տեղեկատվական միջավայրում ծագող ներքին և արտաքին վտանգների չեզոքացման, միջազգային համադրելի փորձի կիրառման և ինքնակարգավորման մեխանիզմների ուժեղացման վերաբերյալ:

Առցանց լրատվամիջոցներում առկա էթիկական և իրավական հիմնահարցերը դիտարկել ենք թե՛ լրագրության, թե՛ լրագրագիտության տեսանկյուններից՝ համադրելով միջազգային փորձի հետ, հաշվի առնելով հայաստանյան միջավայրի առանձնահատկությունները: Արձանագրել ենք. բազմաթիվ խնդիրներով պայմանավորված՝ ոլորտում առկա են մեթոդաբանական և իմացաբանական շփոթ, մոտեցումների, դասակարգման սկզբունքների չլուծված խնդիրներ, լրագրողների պատրաստման և ոլորտի իրավաէթիկական կարգավորման դժվարություններ:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մեզնում լրատվական կայքերի դերակատարման շարունակական աճով, համացանցային ԶԼՄ-ների նկատմամբ հասարակական հետաքրքրության և վստահության ավելացմամբ, ինչպես նաև ԶԼՄ-ների գործունեության վրա ուղղակիորեն ու անուղղակիորեն ներգործող խնդիրների բազմազանությամբ, դրանց լուծման տարատեսակ ուղիների նախանշմամբ:

Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը: Ներկայացվել են Հայաստանի համացանցային ԶԼՄ-ների կազմավորման, զարգացման ընթացքը և առցանց լրատվության ոլորտին առնչվող էթիկական և իրավական հիմնախնդիրները: Աշխատանքը օգտակար կարող է լինել տեղեկատվական դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունների, գործնական պարապմունքների համար, ներառում է փաստական և վերլուծական հարուստ նյութ: Հետազոտության տարբեր բաժիններում առաջ քաշված դրույթները կարող են գործածվել գիտական համապատասխան աշխատանքներում, կիրառվել լրագրողի մասնագիտությամբ ուսումնառողների դասավանդման նպատակով: Հետազոտությունը կարող է հետաքրքրություն ներկայաց-նել գործող համացանցային լրատվամիջոցների խմբագիրների և լրագրողների, ինչպես նաև նրանց համար, որոնք նախատեսում են սեփական լրատվական կայք ստեղծել:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Առցանց ԶԼՄ-ների տեսագործառական հիմնախնդիրների ուսումնասիրությունները վերաբերում են առավելապես վերջին 10-15 տարիներին՝ պայմանավորված ոլորտի աննախադեպ զարգացմամբ: Ընդ որում՝ արևմտյան գիտական շրջանակներում բավական հարուստ գրականություն կա համացանցային լրատվական դաշտի առանձին բնութագրիչների վերաբերյալ՝ տեղեկատվական հասարակության ձևավորումից մինչև համացանցային ԶԼՄ-ների լսարան, սփռման և բովանդակության ընդլայնման հնարավորություններից մինչև լրագրության կոնվերգենցիայի (փոխակերպումների) և լրագրողի մասնագիտական առանձնահատկություններ և այլն: Համացանցային լրագրության տեսության ձևավորման առաջին փորձերից մեկը ֆրանսիացի լրագրող Ռոլանդ դե Վոլկի «Introduction to Online Journalism: Publishing News and Information»[1] («Օնլայն ժուռնալիստիկայի ներածություն. նորությունների և տեղեկատվության հրապարակումը») գիրքն է: Հեղինակն անդրադառնում է համացանցային լրագրողին անհրաժեշտ հմտություններին: Հայաստանում առցանց զանգվածային լրատվամիջոցների վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում առնչվում են վերջին հինգ տարիների բացառությամբ մի քանի հրատարակության: Առաջին քայլերից մեկը եղել է 2003-ին Ռ. դե Վոլկի «Օնլայն ժուռնալիստիկա» աշխատության թարգմանությունը[2]: 2004-ին Ա. Մկրտչյանը պաշտպանության է ներկայացնում «Նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները և ժուռնալիստիկան» թեկնածուական ատենախոսությունը[3], որտեղ, սակայն, հիմնական շեշտադրումն արված է տեղեկատվական տեխնոլոգիաների ուսում-

---

[1] Տե՛ս **De Wolk R.**, Introduction to Online Journalism: Publishing News and Information, Boston, Allyn and Bacon 2001, pp. 200

[2] Տե՛ս **Դե Վոլկ Ռ.**, Օնլայն ժուռնալիստիկա (խմբ. Ա.Ս. Մկրտչյան), Երևան, Ոսկան Երևանցի 2003, էջ 200:

[3] Տե՛ս Մկրտչյան Ա., Նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները և ժուռնալիստիկան, Ատենախոսություն բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2004թ, 151 էջ:

նասիրության վրա, իսկ առցանց լրատվամիջոցների հիմնախնդիրներից հեղինակը որոշակիորեն շոշափել է տիպաբանության դասակարգման հարցը: Հայաստանում համացանցային ԶԼՄ-ների հանդեպ գիտական շրջանակների հետաքրքրվածությունն աշխուժացավ 2009-ին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադրման տասնամյակին նվիրված «Լրագրողական կրթության ապագան Հայաստանում» խորագրով գիտաժողովի օրերին: Ելույթ ունեցողները հանդես եկան նոր մեդիաոլորտի ձևավորմանը համապատասխան կրթական առանձնահատկությունների վերաբերյալ զեկուցումներով (գիտաժողովի զեկուցումների ժողովածուն լույս է տեսել 2010թ.)[4]: 2012-2013թթ. «Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ հրատարակվել են «Ազատ գոտի կամ էլ. Հայաստան»[5] և «Լավագույնը ցանցում»[6] ուսումնասիրությունները, որոնցում հեղինակների խումբը հանդես է գալիս համացանցի տարածմամբ պայմանավորված ձևափոխությունների, ինչպես նաև լրագրողներին՝ ցանցում լրատվական գործունեություն իրականացնելու համար տեսական և գործնական որոշ գիտելիքներ հաղորդելու մեկնաբանություններով: Համացանցային ԶԼՄ-ների խնդիրները լուսաբանելու առումով արժեքավոր է Ա. Ավետիսյանի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը[7], որտեղ ներկայացված են Հայաստանի համացանցային ԶԼՄ-ների կազմավորման, զարգացման ամբողջ գործընթացը և համացանցային զանգվածային լրատվության ոլորտին առնչվող բոլոր հիմնախնդիրներն ու երևույթները մեկ համապարփակ ուսումնասիրության շրջանակներում:

Համացանցային լրատվամիջոցների իրավական և էթիկական հիմնախնդիրների առումով հարկ է առանձնացնել 2012-ին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի կողմից տպագրության երաշխավորված «Նոր և այլընտրանքային մեդիա. էթիկական և իրավական խնդիրներ»[8] միջազգային միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածուն՝ Ն. Մարտիրոսյանի խմբագրությամբ:

Լրագրողական էթիկայի ուսումնասիրության առումով արժեքավոր են Շ. Դոյդոյանի, Վ. Պետրոսյանի աշխատությունները: Շ. Դոյդոյանի «ԶԼՄ և օրենսդրություն» գրքում ներկայացվում են խոսքի և մամուլի ազատության սահմանադրական երաշխիքները, խոսքի ազատության ազգային և միջազգային իրավական կարգավորման առանձնահատկությունները, խոսքի ազատության չարաշահման համար նախատեսվող պատասխանատվության, ինչպես նաև «տեղեկատվության ազատութ-

---

[4]Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր) Պրակ Ի//, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, 222 էջ:

[5]Ազատ գոտի կամ էլ. Հայաստան (լրագրողական ուսումնասիրություններ), Երևան, Ասողիկ, 2012, 100 էջ:

[6]Լավագույնը ցանցում. առցանց լրագրողի ուղեցույց (խմբ.՝ Սուրեն Դեհերյան), Երևան, Ասողիկ, 2013, 125 էջ:

[7] Տե՛ս Ավետիսյան Ա., Համացանցային զանգվածային լրատվամիջոցներ. Ձևավորումը և զարգացումը Հայաստանում, Ատենախոսություն բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2015, 194 էջ:

[8]Տե՛ս Նոր և այլընտրանքային մեդիա. էթիկական և իրավական խնդիրներ//, Երևան, «Հայկական օն-լայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիա» 2012, էջ 50-53:

յուն» հասկացության և նշանակության, տեղեկություն ստանալու կարգերը, պայմանները, իրավունքի խախտման բողոքարկման մեխանիզմները և իրավական պատասխանատվության նորմերը[9]: Աշխատանքում քննվող յուրաքանչյուր հարցի հեղինակը մոտեցել է թե՛ իրավական կարգավորման, թե՛ ինքնակարգավորման տեսանկյունից:

Ինքնակարգավորման հիմնախնդիրներին անդրադարձել է նաև Վ. Պետրոսյանը[10]: Ուշագրավ են նաև հեղինակի մի շարք գիտական հոդվածներ: Թեև Վ. Պետրոսյանի աշխատանքում ներկայացված են համացանցային լրագրության առաջացման հետ ի հայտ եկած նոր մարտահրավերներն ու խնդիրները, ինքնակարգավորման ուղղությամբ վերջին տարիներին իրականացված քայլերը, սակայն ասելիքը ամենևին էլ սպառված չէ, քանի որ երկրում ստեղծված նոր մեդիամիջավայրը, նոր պայմանները լրատվամիջոցներին թելադրում են նոր գործելաոճ, հետևաբար՝ առաջ են գալիս էթիկական նոր խնդիրներ և վիճահարույց հարցեր:

Արտերկրի գիտական շրջանակներում համացանցային լրատվամիջոցների էթիկական և իրավական խնդիրները լայնորեն ուսումնասիրվել են, և հարուստ գրականություն կա: Այսպես՝ կառանձնացնեինք 2006-ին Տապաս Ռեյի հրապարակած «Online Journalism: A Basic Text»[11] («Առցանց լրագրություն. հիմնարարային տեքստ») ծավալուն աշխատությունը: Հեղինակը ներկայացնում է համացանցում լրագրողի աշխատանքի բոլոր կողմերը՝ առաջիններից մեկն անդրադառնալով նաև էթիկական ու իրավական հարցերին: Հետաքրքիր էր ուսումնասիրել նաև արտասահմանյան կրթական հաստատություններում ընդունված ձեռնարկները, մասնավորապես՝ NPR-ի լրագրողների էթիկայի ձեռնարկը[12], Wisconsin–Madison համալսարանի ուսումնասիրությունը գլոբալ մեդիայի էթիկայի[13] մասին և այլն: Նշանակալի էր նաև ԵԱՀԿ-ի կողմից հրատարակված ուղեցույցը առցանց մեդիայի ինքնակարգավորման մասին[14], թե ինչպես կարող են ինքնակարգավորման մեխանիզմները պաշտպանել մեդիան թվային աշխարհում: Հեղինակները փորձում են պատասխանել ամենակարևոր հարցերին՝ ով պետք է հետևի էթիկայի կանոններին առցանց մեդիայում, որքանով են լրագրության էթիկայի հայտնի կանոնները հարմարեցված համացանցային մեդիամիջավայրին, ինչ մարտահրավերներ կան այս ոլորտում, ինչպես է քաղաքացիական հասարակությունը հզորանում և պատասխանատվություն պահանջում առցանց լրատվամիջոցներից:

Ռուսալեզու գրականությունից հարկ է առանձնացնել Դ. Ավրաամովի «Լրագրողների մասնագիտական էթիկան» գիրքը[15], որը համակարգված և ամբողջական ուղեցույց է ուսանողների, դասախոսների, լրագրողների համար: Հեղինակն անդրադառնում է ռուսական մամուլի փորձին, հատկապես վերջին տարիների, էթիկական

---

[9]Տե՛ս Շուշան Դոյդոյան, ՁԼՄ և օրենսդրություն, Երևան, 2007թ:

[10]Տե՛ս Վարդուհի Պետրոսյան, Ժուռնալիստական էթիկա, հիմնախնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում, Երևան, 2012թ:

[11] Տե՛ս **Tapas R.**, Online Journalism: A Basic Text, Cambridge University Press India 2006, pp. 284.

[12] http://ethics.npr.org/tag/social-media/

[13] https://ethics.journalism.wisc.edu/resources/global-media-ethics/

[14]http://www.osce.org/fom/99560?download=true

[15] Авраамов Д. С., Профессиональная этика журналиста, М., 1999.

խնդիրներին, լրագրողի գործունեության ընթացքում ծագած մի շարք դժվարություններ, նաև՝ տարբեր երկրներում ընդունված էթիկական կանոնագրերին: Գ. Լազուտինայի աշխատանքում[16] ինքնակարգավորումը ներկայացված է բարոյականության, նոր արժեքների և մասնագիտական էթիկայի տեսանկյունից:

Զուտ համացանցային ԶԼՄ-ների ինքնակարգավորման առումով արժեքավոր է «Путеводитель по саморегулированию сетевых СМИ» գիրքը[17], որտեղ ուսումնասիրված են Եվրամիության երկրների փորձը և ինքնակարգավորման մեխանիզմները՝ պայմանավորված լրագրության ասպարեզում նոր միտումներով, ինչպես նաև «Media regulation in the Internet age»[18], «The death of media regulation in the age of the internet»[19] աշխատությունները: Եթե էթիկական հիմնահարցերը դիտարկելու առումով ուղենշային են արտերկրում հայտնի մեխանիզմները, էթիկայի կանոնագրերը, օրինակ՝ միջազգային և տեղական մի շարք կազմակերպությունների ավելի քան 400 հազար լրագրողների կողմից ընդունված էթիկայի սկզբունքները[20],ապա իրավական առումով՝ օրենքները, որոշումները, դատական նախադեպերը, առանձին խնդիրների վերաբերյալ տարբեր երկրներում առկա իրավակարգավորումները, մոտեցումները: Այս մասին առավել մանրամասն խոսվում է աշխատանքի 2-րդ և 3-րդ գլուխներում: Նշանակալի է նաև ԶԼՄ-ների գործունեության կարգավորման իրավական խնդիրների քննարկումը Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում: Դրանք լուսաբանված են 2010-ին լույս տեսած «Զանգվածային լրատվության միջոցները և նրանց խնդիրների կարգավորումը օրենսդրությամբ»[21] գրքում, «Հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության պաշտպանության խնդիրները Հայաստանի համացանցային ԶԼՄ-ներում» (2012)[22] և «Օգտատերերի մեկնաբանությունների համար առցանց լրատվական միջոցների պատասխանատվության հիմնախնդիրները ՀՀ-ում» (2015)[23] հոդվածներում, բազմաթիվ ելույթներում, հարցազրույցներում:

---

[16] Лазутина Г. В., Профессиональная этика журналиста, М., 2002, 206 с.

[17]Путеводитель по саморегулированию сетевых СМИ / Ред. А.Улен и М.Стоун. - Вена: Представитель ОБСЕ по вопросам свободы СМИ, 2013. - 130 с.

[18]http://www.euractiv.com/section/digital/linksdossier/media-regulation-in-the-internet-age/#ea-accordion-positions

[19] http://www.nyujlpp.org/wp-content/uploads/2012/11/Steve-Mitra-The-Death-of-Media-Regulation-in-the-Age-of-the-Internet.pdf

[20]http://ethicnet.uta.fi/international/international_principles_of_professional_ethics_in_journalism

[21]Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Զանգվածային լրատվության միջոցները և նրանց խնդիրների կարգավորումը օրենսդրությամբ, խմբ.՝ Լիանա Մարուքյան, Կատյա Քրիստինա Պլատե, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ, Երևան, 2010, էջ 8 (58 էջ):

[22] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության պաշտպանության խնդիրը Հայաստանի համացանցային ԶԼՄ-ներում //Նոր և այլընտրանքային մեդիա. էթիկական և իրավական խնդիրներ//, «Հայկական օն-լայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիա» 2012, Երևան, էջ 50-53:

[23]Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Օգտատերերի մեկնաբանությունների համար առցանց լրատվական միջոցների պատասխանատվության հիմնախնդիրը ՀՀ-ում // Պետություն և իրավունք 1 (67), 2015, Երևան, էջ 6-13:

Գիտական նորույթը: Տեսական և փորձագիտական ծավալուն հետազոտությամբ ներկայացրել ենք համապարփակ, արդիական և հնարավորինս ամբողջական ուսումնասիրություն նոր մեդիայի ստեղծման ժամանակագրության և զարգացման հեռանկարների, առկա հիմնախնդիրների մասին: Ի մի ենք բերել փորձագիտական և գիտական, ինչպես նաև մասնագիտական շրջանակներում քննարկվող, տարածված և վիճելի դրույթները, փորձել ենք առաջարկել ընդհանուր և ընկալելի լուծումներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Հայաստանի համացանցային զանգվածային լրատվամիջոցներն են, դրանց դասակարգման, համացանցում լրատվական բովանդակություն արտադրողների և սպառողների, մասնավորապես՝ նրանց միջև ծագող փոխհարաբերությունների իրավական և էթիկական կարգավորման առանձնահատկությունները:

Հաշվի առնելով ընտրված թեմայի գիտագործնական նշանակությունը և դրա մշակվածության ժամանակակից փուլը՝ **մեր հետազոտության նպատակն է** գիտաքննորեն ներկայացնել Հայաստանում համացանցային լրատվամիջոցների կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմները, դրանց առնչվող հիմնախնդիրները, նախանշել լուծման հնարավոր ուղիները՝ ներկայացնելով իրավական և էթիկական հիմնահարցերի մեծաթիվ բաղադրատարրերի առանձնահատկությունները:

Նպատակին համապատասխան՝ ատենախոսության մեջ առաջադրվել են **հետևյալ խնդիրները.**

1. Ուսումնասիրել նոր մեդիամիջավայրի առանձնահատկությունները, ավանդականի հետ տարբերությունները և զարգացման հնարավորությունները,
2. Ներկայացնել նոր մեդիամիջավայրի ինքնակարգավորման մեխանիզմները, առկա խնդիրները, քննել, թե որքանով են այդ մեխանիզմները նպաստում դաշտի ինքնակարգավորմանը,
3. Ուսումնասիրել համացանցային լրատվության ոլորտում ծագող իրավահարաբերությունները,
4. Պարզել համացանցային տիրույթում լրատվամիջոցների և հանրության օրենսդրական պաշտպանվածությունը,
5. Դիտարկել միջազգային ընդունված չափանիշների կիրառման հնարավորությունները հայաստանյան մեդիամիջավայրում,
6. Վերլուծել համացանցային լրատվության ոլորտում իրավական ու էթիկական կարգավորման մեխանիզմների կիրառման արդյունավետությունը և փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Իրականացրել ենք տեսական և գործնական մեծածավալ հետազոտություն Հայաստանի առցանց ԶԼՄ-ների տարբեր բնութագրերի վերաբերյալ: Մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ուսումնասիրվել և գիտական քննությամբ ներկայացվել են համացանցային լրատվամիջոցների գործունեության

իրավական և էթիկական կարգավորման առանձնահատկությունները: Կիրառել ենք համեմատական և վերլուծական մեթոդները, անհրաժեշտության դեպքում՝ դրանք համադրել:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Աշխատանքում դիտարկվել է 2010-ից մինչև 2016 թվականներն ընկած ժամանակահատվածը, ինչը պայմանավորված է ոլորտում այդ տարիներին տեղի ունեցած գործընթացներով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ՀՀ գիտական հանդեսներում և ժողովածուներում տպագրված վեց գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի կողմից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի ընտրությունն ու արդիականությունը, դիտարկվում է գիտական մշակվածության աստիճանը, ինչպես նաև հիմնավորվում է աշխատանքի գիտական նորույթը: Ձևակերպված են նաև հետազոտության առարկան, նպատակներն ու խնդիրները, հստակ սահմանված են հետազոտության ժամանակային և աշխարհագրական շրջանակները: Այստեղ նշված են նաև հետազոտության մեթոդները, տեսական ու գործնական նշանակությունը, ներկայացված է ատենախոսության կառուցվածքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՆՈՐ ՄԵԴԻԱՄԻՋԱՎԱՅՐ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ատենախոսության առաջին գլխում ներկայացրել ենք հետևյալ համացանցային ռեսուրսները՝ որոնողական, գիտական, առևտրային, անձնական, սոցիալական, կազմակերպությունների լրատվական բնույթի ռեսուրսներ: Սահմանվում է «նոր մեդիա» հասկացությունը, դրա հնարավորությունները: Եթե արևմտյան մասնագիտական գրականության մեջ ի սկզբանե առցանց լրատվամիջոցները դիտարկվել և դասակարգվել են որպես ԶԼՄ-ի առանձին տեսակ՝ հիմնականում հանդես գալով «նոր մեդիա» (new media) անվամբ, ապա հետխորհրդային տարածաշրջանում երկար ժամանակ քննարկվում էր առցանց լրատվական կայքերին առանձին լրատվամիջոցի կարգավիճակ տալու հարցը: Աշխատանքում ներկայացնում ենք առցանց լրատվամիջոցների սահմանման վերաբերյալ առկա հակասական տեսակետները և

տարբեր երկրների փորձը: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա «Զանգվածային լրատվության մասին» օրենքն առցանց լրատվամիջոց է համարում որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի և լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տևողությունից և այլ չափանիշներից[24]: Խնդիրն այն է, որ դատելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տրված սահմանումից՝ կարելի է եզրակացնել, որ բլոգները, սոցիալական ցանցերում էջերը գտնվում են նույն օրենսդրական դաշտում ավանդական լրատվական գործակալությունների և համացանցային պարբերականների հետ: Կարծում ենք, որ առցանց լրատվության միջոցների համար հստակ չափանիշների սահմանման հարցը կարիք ունի լրացուցիչ քննարկման:

Աշխատանքում առանձին ենթագլխով անդրադարձել ենք նաև ավանդական և նոր մեդիայի մրցակցության և համակեցության խնդիրներին, վերլուծաբար ներկայացրել ենք թե՛ տպագիր մեդիայի դարաշրջանի ավարտը կանխատեսող մեկնաբանությունները, թե՛ տպագիր թերթի և գրքի գոյության շարունակականության մասին փաստարկները:

Հայաստանում ևս նկատելի է ավանդական և նոր մեդիայի մրցակցություն: Փորձագիտական հաշվարկներով՝ Հայաստանում գործում է ավելի քան 200 լրատվական կայք, որոնց մի մասն է միայն ակտիվ, ունի ընթերցողների կայուն քանակ և ազդեցության դաշտ: Ինչ վերաբերում է Հայաստանի տպագիր լրատվամիջոցների թվին, ապա 2016թ. օգոստոսի 31-ի դրությամբ գրանցված և հաշվառված են նյութական կրիչի վրա թողարկվող 1330 զանգվածային լրատվության միջոց՝ 876 թերթ և 454 ամսագիր:

Հայաստանում համացանցային լրատվամիջոցների բովանդակային ուղղվածության կարևոր կողմնորոշիչ է ֆինանսական բաղադրիչը: Մեր ուսումնասիրության առանցքում գտնվող կարգավորման և ինքնակարգավորման խնդիրները սերտորեն առնչվում են մեդիաարտադրանքի բովանդակությանը, մասնագիտական որակներին, որոնք էլ ուղղակիորեն և անուղղակիորեն պայմանավորված են նաև ֆինանսական գործոնով: Հայաստանում լրատվամիջոցների ֆինանսական աղբյուրները առավել քան կարևոր են, քանի որ քիչ կայքեր ունեն այնքան գովազդ, որի շնորհիվ կկարողանան ինքնաֆինանսավորվել, մի մասն էլ առհասարակ գովազդ չունի: Խմբագիրները վկայում են, որ գովազդային շուկան Հայաստանում քաղաքականացված է, և դա անմիջականորեն արտացոլվում է նաև վիրտուալ միջավայրում:

Խոսել ենք համացանցային լրատվամիջոցների իրավական կարգավորման անհրաժեշտությունից, որով երաշխավորվում է թե՛ հասարակության տեղեկատվական անվտանգությունը, թե՛ կանխում մարդկանց մասին մասնավոր բնույթի տեղեկատվության տարածումը, ինչը կարող է նպաստել ապատեղեկատվության, զրպարտության, վիրավորանքի, գրագողության նվազեցմանը:

---

[24]Հայկական առաջին առցանց լրատվամիջոցի խնդրին անդրադառնում է Ա. Ավետիսյանը, Համացանցային զանգվածային լրատվամիջոցներ. Ձևավորումը և զարգացումը Հայաստանում, ատենախոսություն բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2015, էջ 48:

Համացանցային լրատվամիջոցների իրավական կարգավորման մասին խոսելիս նախ՝ անդրադառնում ենք միջազգային փորձին: Բանն այն է, որ համացանցի վերաբերյալ ամենուր ընդունելի և կիրառելի օրենսդրություն չկա: Գոյություն ունեցող նորմատիվային ակտերը կարգավորում են դրա գործունեության մասնավոր ասպեկտները և առաջին հերթին՝ էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային թվային ստորագրության, հեռահաղորդակցական ցանցերին հասանելիության հարցերը: Ամեն դեպքում կան մի շարք սկզբունքներ, որոնք կարելի է համարել համընդհանուր և կիրառելի զարգացած և քաղաքակիրթ երկրների դեպքում: Աշխարհում հայտնի են համացանցային կարգավորման հիմնական երկու մեխանիզմներ՝ ֆիլտրող և արգելափակող, որոնք պետք է համատեղելի լինեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, որով պաշտպանվում է արտահայտվելու ազատությունը: Ֆիլտրողի և արգելանքի միջոցները կիրառելիս պետք է հաշվի առնել երեք պայման՝ նպատակահարմարություն, անհրաժեշտություն և համաչափություն:

Այսօր աշխարհում ամենալուրջ և կարևոր խնդիրներից մեկը դարձել է համացանցում տեղեկատվական ազատ հոսքերի կառավարումը: Մինչ Չինաստանը, Իրանի Իսլամական Հանրապետությունը և վերջին շրջանում նաև Ռուսաստանի Դաշնությունը քայլեր են իրականացնում համացանցում տեղեկատվական հոսքերի սահմանափակման համար՝ ստեղծելով օրենսդրական հիմքեր, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները կոչ են անում պետություններին հնարավորինս զերծ մնալ իրավական կարգավորումներից, քանի դեռ ծայրահեղ անհրաժեշտություն չկա: Իսկ Հայաստանում, այլ երկրների համեմատ, համացանցում տեղեկատվական ազատության սահմանափակումներ չկան կամ քիչ են. ընդամենը երկու դեպքի ենք անդրադարձել՝ 2008թ. մարտի 1 և 2016թ. հուլիս:

Համացանցային ռեսուրսների կարգավորման ոճերի ու մոտեցումների տեսանկյունից երկրները կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբի՝[25] լիբերալ, ավտորիտար, ինտերվենցիոնիստական, «light touch» (բառացի թարգմանությամբ՝ թեթև հպում, չմիջամտող քաղաքականություն) ոճի պետություններ: Այս բաժանման հիմքում այն հարցն է, թե որտեղ, ով և ինչ ծավալով է կարգավորում համացանցը: Freedom House կազմակերպության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում նկատվում է համացանցում գրաքննության աճ: Այսպիսով, ընդհանուր գծերով ներկայացնելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, համացանցային ռեսուրսների դասակարգումը, նոր և ավանդական մեդիան, տարածման ձևերը, աղբյուրները, գործունեության առանձնահատկությունները՝ մյուս գլուխներում կոնկրետ անդրադառնում ենք ինքնակարգավորման և կարգավորման խնդիրներին:

---

[25]Տե՛ս Իրավաբանական գիտությունների դոկտոր, Հագենի Համալսարանի (Գերմանիա) գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս Գոռ Հովհաննիսյանի հարցազրույցը, http://hraparak.am/?p=102626&l=am/lratvutyan+azatutyuny+veraberum+e+petutyunic+lragroxneri+paspht panutyany+harcazruyc

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ. ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

Ատենախոսության այս հատվածում մեր տեսադաշտում լրագրողական էթիկան է: Այն Հայաստանում ուսումնասիրության նյութ է դարձել 1990-ականների վերջերին: Հակիրճ անդրադարձել ենք էթիկայի պատմությանը, սահմանմանը, տեսություններին, գործառույթներին: Այսօր ինքնակարգավորման մի շարք մեխանիզմներ կան՝ մամուլի խորհուրդները, մամուլի օմբուդսմենը, լրագրողական կազմակերպություններն ու լրագրողական միությունները, խմբագրական կոլեգիան, էթիկայի կանոնագրերը[26], սակայն դեռ վաղ է խոսել մեդիայի ինքնակարգավորման ինստիտուտի կայացման մասին: Մեխանիզմներից յուրաքանչյուրին առանձին և մանրամասն անդրադարձ է կատարվում: Հատկապես առանձնացրել ենք վերջին տարիներին ստեղծված ինքնակարգավորման երկու կառույցները՝ Դիտորդ մարմինը և Տեղեկատվական վեճերի խորհուրդը: ՏՎԽ-ն եզրակացություններ է տալիս նաև դատարանում քննված գործերի վճիռների վերաբերյալ, և եթե ԴՄ-ի «վճիռներից» խուսափելու համար լրատվամիջոցները պարզապես չեն միանում Վարքականոնին, ապա այս դեպքում խուսափելն անհնար է: Եթե հայտնվել եք դատարանում, կամ աղմուկ է առաջացել ձեր հրապարակումը, ապա Ձեզ ամենայն հավանականությամբ «կքննի» ՏՎԽ-ն:

Վերջին տարիներին մեծ տարածում ունեն էթիկայի կանոնագրերը, որոնց մի մասը կենտրոնանում է լրագրողի հոգեբանության վրա, մյուսները հռչակում են սկզբունքներ, երրորդներն էլ առաջարկում են պատժամիջոցների ցանկ՝ նախատեսված մասնագիտական բարոյականության այս կամ այն խախտման համար: Ներկայացվում են էթիկական կանոնագրերի տեսակները և գործառույթները, ՀՀ մեդիադաշտում առկա էթիկայի կանոնագրերը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լրատվամիջոցների, լրագրողական կազմակերպությունների էթիկայի կանոնագրերը քիչ են տարբերվում միմյանցից: Պատճառն այն է, որ էթիկայի սահմաններում գործունեություն ծավալելու համար կանոնները գրեթե նույնն են, իսկ տարիների ընթացքում փոխակերպվող մեդիան, լրատվամիջոցների նոր տեսակները ոչ թե գալիս են վերացնելու էթիկան, այլ ընդհակառակը՝ ամրապնդում և վերահաստատում են էթիկայի կանոններին հետևելու անհրաժեշտությունը, տարիների ընթացքում թրծված և հայտնի սկզբունքներին ավելացնելով նորերը՝ պայմանավորված ցանցային մեդիամիջավայրի առանձնահատկություններով: Աշխատանքում մենք ևս առաջարկում ենք կանոնագրի մի տեսակ, որը կարող է կիրառելի լինել համացանցային լրագրողների համար: Անդրադարձել ենք նաև լրագրողական կազմակերպություններին ու միություններին, որոնք կոչված են պաշտպանելու լրագրողների շահերը, ստեղծելու ազատ, մրցակցային միջավայր որակյալ մեդիաարտադրանքի համար: Հայաստանում այդպիսիք են Հայաստանի ժուռնալիստների միությունը, Երևանի մամուլի ակումբը, Մամուլի ազգային ակումբը, Խոսքի

[26]Վարդուհի Պետրոսյան, Ժուռնալիստական էթիկա, հիմնախնդիրները և զարգացման միտումները արդի հայ մամուլում, Երևան, 2012թ, էջ 20:

ազատության պաշտպանության կոմիտեն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Մեդիանախաձեռնությունների կենտրոնը (նախկին Ինտերնյուս հ/կ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը:

Անդրադարձել ենք նաև համացանցում ստեղծված խմբերին: Լրատվամիջոցների էթիկական խնդիրների լուծման առումով «զսպիչ» նշանակություն ունեն ֆեյսբուք հարթակում ստեղծված «Հանուն բարեխիղճ լրագրության» և «Մեդիագրագիտություն» խմբերը: Վերջին ենթագլուխը վերաբերում է հայաստանյան առցանց լրատվամիջոցներում էթիկական խնդիրներին և դրանց լուծման ուղիներին[27]: Դրանք առկա են նաև արտասահմանյան լրատվամիջոցներում, ինչի մասին խոսում են օտարերկրյա գիտնականները: Արձանագրենք՝ Հայաստանում ստեղծվում և տարածվում են կայքեր, որոնք ո՛չ հասցե, ո՛չ խմբագրակազմ ունեն, մարդ-լրատվամիջոց են, երբ մեկը կարող է տանը նստած նյութեր գրել և հրապարակել: Այս խնդրով մտահոգ են նաև մեդիայի ներկայացուցիչները, ովքեր 2016թ. հունիսին կոչ են արել կարգավորել առցանց լրատվամիջոցների դաշտը: Անանուն, անստորագիր նյութեր, չստուգված տեղեկություններ, սոցիալական ցանցերում կեղծ օգտատերերի անունից տարածված գրառումներ. ահա այս ամենին կարելի է հանդիպել այդ «լրատվամիջոցներում»:

Նոր և այլընտրանքային մեդիայի բուռն զարգացմամբ պայմանավորված՝ առավել խոցելի դարձավ բանակը, ինչը հատկապես երևաց ապրիլյան պատերազմից հետո: Իհարկե, այժմ զինված ուժերում առկա խնդիրները դարձել են ավելի բաց քննարկումների և քննադատության համար, սակայն հաճախ օպերատիվության պատճառով կամ ավելի շատ ընթերցող ունենալու նպատակով կայքերը հրապարակում են կասկածելի, ոչ ճիշտ, մի քանի տարվա վաղեմություն ունեցող տեղեկություններ՝ քննարկումների լայն դաշտ բացելով հակառակորդի համար: Օրինակ՝ «Ինչպես են կրակում նահանջող ադրբեջանցի զինվորների ուղղությամբ» հայտնի տեսանյութը այդ օրերին թոփ լուրերի շարքում առաջինն էր, մինչդեռ տեղյակ լրագրողները և իրավասու անձինք հայտարարել էին, որ այն հին է: Այլ խնդիրներ, որ ի հայտ եկան այդ օրերին՝ ադրբեջանական կամ այլ աղբյուրներից ոչ պատշաճ օգտվելը կամ պարզապես դրանցից մեխանիկական արտատպումները, ընդհուպ՝ տեսանյութերի տեղադրումով, հայկական կողմին հանձնված հայ զինվորների խոշտանգված մարմինների մանրամասն նկարագրությունները, առանց ճշտելու անհետ կորածների մասին տեղեկատվություն հաղորդելը, զինվորական համազգեստ կրել/ի ցույց դնել, քանի որ դա կարող է հառակորդի կողմից թիրախավորվելու առիթ դառնալ և այլն:

Ի դեպ, ապրիլյան պատերազմի, ՊՊԾ գնդի գրավման և ՀՀ-ում իրականացված բողոքի ակցիաների լուսաբանման խնդիրները հաշվի առնելով՝ Դիտորդ մարմինը մշակել և ներկայացրել է Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի ուղեցույց[28]: Նախ՝ կարևորվում է ընդհանուր էթիկական սկզբունքների կիրառումը՝ հավաստիություն և ճշգրտություն, անաչառություն և անկողմնակալություն, փաստերի, կարծիքների և

---

[27] Մարտինյան Ի., Ինքնակարգավորման խնդիրները հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում, «Արդարադատություն» գիտական հանդես, թիվ 36, Երևան, 2017, էջ 91-96:
[28]http://ypc.am/wp-content/uploads/2016/01/Guidelines_Conflicts_arm.pdf

մեկնաբանության տարանջատում: Այնուհետև ներկայացվում են երկընտրանքները՝ հրապարակե՞լ արդյոք ռազմական գաղտնիքը, եթե այն հանրային նշանակություն ունի, գրե՞լ արդյոք հոռի բարքերի մասին՝ բանակում, թե քաղաքացիական շարժումների ժամանակ, հրապարակե՞լ սենսացիոն լուսանկար կամ տեսանյութ, որով հնարավոր է նույնականացնել ռազմական օբյեկտներն ու դիրքերը, կամ արժե՞ հրապարակել զոհվածների մարմինների լուսանկարները, տեսանյութերը այդ մասին, պաշտոնական տեղեկություններից բացի՝ օգտվե՞լ այլ աղբյուրից, խուսափե՞լ տեղեկատվական պատերազմից, թե՞ դառնալ դրա մասնակիցը: Ընդ որում՝ մի շարք դեպքերում ուղեցույցի հեղինակները կոնկրետ լուծում չեն առաջարկում, թեև կան դեպքեր, երբ միանշանակ մոտեցում է ցուցաբերված: Օրինակ՝ խորհուրդ են տալիս չտպագրել այնպիսի տվյալներ, որոնք կարող են ծառայել հակամարտության մյուս կողմի շահերին: Ուղեցույցը պարունակում է նաև խորհուրդներ ու այլ օգտակար նյութեր լրատվամիջոցների համար:

Էթիկական կանոնների խախտման դեպքեր հանդիպում են անգամ կայացած առցանց լրատվամիջոցներում, որոնց մի մասը անփութության, չիմացության, շտապողականության արդյունք է: Խոսելով հայաստանյան առցանց լրատվամիջոցներում էթիկական խնդիրների և դրանց լուծման ուղիների մասին՝ ներկայացրել եք միջազգային փորձը: Արձանագրել ենք՝ մեզնում էթիկայի սկզբունքների պահպանման համար կազմակերպությունների, առանձին մարմինների գործունեությունն այդքան էլ արդյունավետ չէ: Ավելի ճիշտ կլինի խնդիրը կանխել և լուծել խմբագրության ներսում: Դրա համար, նախ, անհրաժեշտ է, որ դեռևս ուսանողական նստարանից լրագրողները սովորեն ու սերտեն լրագրողական էթիկան, իսկ արդեն աշխատանքի տեղավորվելիս նրան փոխանցեն տվյալ լրատվամիջոցի էթիկայի կանոնագիրը, զգուշացնեն՝ ինչն է կարելի, ինչը՝ ոչ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության երրորդ գլխում անդրադառնում ենք համացանցային լրատվամիջոցների իրավական կարգավորմանը: Համացանցին վերաբերող իրավական ակտերը մեզանում մի քանիսն են, որոնք հիմնականում վերաբերում են հրապարակային և անհատական ծանուցումներին, տվյալների հաղորդմանն ու համացանցում հասանելիության ծառայությունների մատուցման սակագներին, պայմաններին, թույլտվություններին և այլն: Դրանց մի մասն էլ անուղղակի կարգավորումներ են, որոնք բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից՝ վիրավորանք և զրպարտություն, հեղինակային իրավունք և այլն:

Համացանցային լրատվամիջոցներում առանցքային խնդիրներից է գրագողությունը: Թեև այն արգելված է, իսկ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ են արվել, այդուհանդերձ, խնդիրը դեռ չի կարող ամբողջովին լուծված համարվել հայկական համացանցային լրատվամիջոցների դեպքում: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ

օրենքը տարբերակում չի դնում ավանդական և առցանց լրատվամիջոցների միջև, բայց և այնպես առցանց լրատվական միջավայրում հեղինակային իրավունքը շատ ավելի քիչ է պաշտպանված, քան ավանդականում: Դա բխում է համացանցի բնույթից, որն ավելի դժվար կառավարելի, ինքնակարգավորվող միջավայր է, և, ամենակարևորը, այս միջավայրում չկան աշխարհագրական սահմաններ, ինչը թույլ է տալիս հեղինակային իրավունքի միջամտություն կատարել տվյալ պետության տարածքից դուրս և պատաս-խանատվություն չկրել:

Մեր դիտարկմամբ՝ լրագրողների և լրատվամիջոցների համար կարևոր է նաև օրենքի 32-րդ կետը, որը վերաբերում է հարցազրույցի նկատմամբ հեղինակային իրավունքին: Ըստ այդմ՝ հարցազրույցի հրապարակումը թույլատրվում է հարցազրույց տվող և հարցազրույց անցկացնող անձանց համաձայնությամբ: Հեղինակային իրավունքի պաշտպանության առումով դատական պրակտիկային ևս անդրադարձ կա:

Մեկնաբանությունների դաշտի կարգավորման խնդիրը հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում դեռ լիովին լուծում չի գտել: Հայկական լրատվական կայքերի մի մասը չունի մեկնաբանությունների դաշտ, խուսափում է իրավական խնդիրներից: Բայց սա լավագույն տարբերակը չէ, քանի որ մեկնաբանությունների դաշտը ոչ միայն ընթերցող գրավելու միջոց է, այլև տեղեկատվության աղբյուր. որոշ լրատվամիջոցներ կարգավորում են իրենց մեկնաբանությունների դաշտը, սահմանում խաղի կանոններ:

Ներկայումս հայրենական մեդիայի, մասնավորապես՝ համացանցային լրատվամիջոցների բնորոշ հատկանիշներից մեկը անանուն աղբյուրների հղմամբ լուրերի տարածումն է, ինչը գրավիչ է դարձնում նյութը, սակայն չափով կասկածի տակ է դնում տեղեկատվության իսկությունը: Երբեմն անանուն աղբյուրը վկայակոչելով՝ տեղեկատվություն հաղորդելը արդարացված է, քանի որ պարզվում է՝ տեղեկատվությունը հավաստի է, սակայն աղբյուրի բացահայտման դեպքում այդ անձի անվտանգության համար կարող են սպառնալիքներ ստեղծվել: Աղբյուրների հետ շփվելիս լրագրողի առաջնային, կարևոր պարտականությունն է՝ տեղեկատվության հավաստիությունը ճշտել նաև 2-րդ, 3-րդ աղբյուրից՝ ապատեղեկատվությունից խուսափելու համար: Տեղեկատվական աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության հիմնաքարերից է:

Լրատվամիջոցների և լրագրողների գործունեությունը կարգավորող հիմնական և կարևոր օրենքներից մեկը վերաբերում է պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին հասցված վիրավորանքին և զրպարտությանը: Բոլոր միջազգային և ներպետական օրենքներով ամրագրված է. մարդու խոսքի ազատությունը կարող է սահմանափակվել անձի պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով: Իրականում վիրավորանքի և զրպարտության սահմանները հեղհեղուկ են, դրա համար նախատեսված պատասխանատվությունն էլ՝ երբեմն ոչ իրավաչափ: Տարիներ ի վեր զրպարտությունը և վիրավորանքը քրեորեն պատժելի արարքներ են եղել, կարգավորվել են ՔՕ-ի 135-րդ և 136-րդ հոդվածներով: Այսօր էլ ՔՕ-ի 344-րդ հոդվածով սահմանվում է դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը: Օրենքի ապաքրեականացումից հետո դատական հայցերի տարափ արձանագրվեց

լրատվամիջոցների դեմ: Այս ամենի առնչությամբ չափազանց մեծ էր ոչ միայն տեղական լրագրողական հանրության մտահոգությունը, այլև միջազգային տարբեր կառույցների դիտորդների և փորձագետների ուշադրությունը: Մեր աշխատանքում ներկայացնում ենք ողջ գործընթացը՝ օրենքի փոփոխությունից առաջ ստեղծված վիճակը, դրանից հետո արված քայլերը, սահմանումները, դատարան դիմելու կարգը, վիրավորանքի և զրպարտության դեպքում ներկայացվող պահանջները:

Քրեական պատմությունները կամ առհասարակ «կրիմինալը», դժբախտ, դաժան դեպքերը համացանցային լրատվամիջոցների համար արագ և շատ ընթերցող հավաքելու աղբյուր են: Իհարկե, կան լրատվամիջոցներ, որոնք խուսափում են կամ հնարավորինս քիչ են հրապարակում նման նյութեր: Այդ լրատվամիջոցները կարողացել են ունենալ քիչ, բայց «պատրաստված, ինտելեկտուալ» լսարան: Հրաժարվել նման ինֆորմացիաներից ոչ բոլոր լրատվամիջոցներն են կարող, բայց կարելի է և պետք է այս ամենը «մատուցել» գրագետ, առանց որևէ մեկի իրավունքը խախտելու, ցավ պատճառելու: Համացանցային լրատվամիջոցներում բազում նյութեր կարելի է գտնել, որտեղ հեղինակները խախտում են ամենակարևոր սկզբունքներից մեկը՝ մարդու անմեղության կանխավարկածը: Այս առնչությամբ ներկայացրել ենք ներպետական և միջազգային օրենսդրությունը, արտասահմանյան հայտնի լրատվամիջոցների փորձը, հայաստանյան դատական պրակտիկան:

Լրատվամիջոցների և լրագրողների գործունեության հիմնաքարը արտահայտվելու, խոսքի ազատությունն է, որը պետք է հավասարակշռվի և որոշ դեպքերում անհրաժեշտորեն սահմանափակվի մարդու անձնական կյանքի իրավունքով: Այն լուսաբանելու հարց իրավական և էթիկական կարգավորման տիրույթում է, քանի որ այս առումով ՀՀ օրենսդրության մեջ դեռ բաց տեղեր կան: Մենք առանձնացրել ենք համացանցային լրատվամիջոցներում անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտման մի քանի ուղղություններ՝ առաջարկելով լուծումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր մեդիամիջավայրում հաստատուն, կողմնորոշված քայլեր անելու, միջազգային փորձի, Հայաստանի Հանրապետության նոր մեդիամիջավայրի արդի վիճակի վերլուծությանը նվիրված մեր աշխատանքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Համացանցային լրագրության ձևավորմամբ լրատվության ոլորտի իրավական կարգավորման առջև նոր խնդիրներ և մարտահրավերներ են ծառացել: Այդ խնդիրները կարգավորող օրենսդրական գլխավոր փաստաթուղթը 2003-ին ընդունված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքն է, որը, սակայն, չի բավարարում իրավահարաբերությունների լիարժեք ապահովում:

2. Հեղինակային իրավունքի պահպանման և գրագողության դեմ պայքարի ինքնակարգավորման իրական փուլը մեկնարկել է 2010-ից: Համացանցային ԶԼՄ-ների դաշտում ստեղծված շատ խնդիրներ էթիկական կարգավորման ոլորտ են անցել, մշակվել է «Առցանց լրագրողի վարքականոնը», առցանց մի շարք լրատվամիջոցների խմբագիրներ, համատեղ հայտարարությամբ հանդես գալով, առաջարկել են

գործունեության համընդհանուր կանոններ, որոնք հնարավորություն կտան միաժամանակ կարգավորել խնդրահարույց փոխհարաբերությունները, խուսափել խոսքի ազատության սահմանափակումներից:

3. Համացանցային լրատվամիջոցներում առկա խնդիրները լուծելուն են կոչված նաև ինքնակարգավորման մեխանիզմները՝ մամուլի խորհուրդները, մամուլի օմբուդսմենը, լրագրողական կազմակերպություններն ու լրագրողական միությունները, խմբագրական կոլեգիան, էթիկայի կանոնագրերը: Հատկապես կառանձնացնեինք վերջին տարիներին Հայաստանում ստեղծված երկու կառույցները՝ Դիտորդ մարմինը և Տեղեկատվական վեճերի խորհուրդը:

4. Իրավական և էթիկական կարգավորման ոլորտներում բազմաթիվ խնդիրներ կան հայաստանյան առցանց մեդիայում: Էթիկական կանոնների խախտման դեպքերի մի մասը անփութության, չիմացության, շտապողականության արդյունք է: Դրանցից ամենատարածվածներն են՝ մարդու անձնական կյանք ներխուժելը, «գողացված» և «վատ» լուսանկարները և այլն: Անհրաժեշտ է, որ ուսանողական նստարանից լրագրողները սովորեն և սերտեն լրագրողական էթիկան, իսկ արդեն աշխատանքի տեղավորվելիս նրան փոխանցեն տվյալ լրատվամիջոցի էթիկայի կանոնագիրը, զգուշացնեն՝ ինչն է կարելի, ինչը՝ ոչ:

5. Առցանց լրատվամիջոցների ընձեռած հնարավորություններից մեկն էլ մեկնաբանությունների դաշտն է՝ ընթերցողի հետ արագ, արդյունավետ կապի միջոց: Մեկնաբանությունների դաշտը ոչ միայն ընթերցող գրավելու հնարավորություն է տալիս, այլև տեղեկատվության աղբյուր է, սակայն պետք է հաշվի առնել, որ լրատվամիջոցը կարող է պատասխանատվության ենթարկվել այդ դաշտում տեղ գտած մտքերի համար, եթե նախապես տեղյակ է եղել դրանց բովանդակությունից: Մեկնաբանությունների դաշտի կարգավորման խնդիրը ևս հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում դեռ լիովին լուծում չի գտել: Հայկական լրատվական կայքերի մի մասը չունի մեկնաբանությունների դաշտ. այդպիսով խուսափում է իրավական խնդիրներից և քաշքշուկներից, որոշները կարգավորում են իրենց մեկնաբանությունների դաշտը, սահմանել են խաղի կանոններ, որոնցից դուրս մեկնաբանությունները չեն հաստատվում մոդերատորի կողմից:

6. Հայրենական մեդիայի, մասնավորապես՝ համացանցային լրատվամիջոցների բնորոշ հատկանիշներից մեկը անանուն աղբյուրների հղմամբ լուրերի տարածումն է, ինչը գրավիչ է դարձնում նյութը, սակայն որոշակի չափով կասկածի տակ է դնում տեղեկատվության իսկությունը: Երբեմն անանուն աղբյուրին վկայակոչելով՝ տեղեկատվություն հաղորդելը արդարացված է, քանի որ պարզվում է՝ տեղեկատվությունը հավաստի է, սակայն աղբյուրի բացահայտման դեպքում այդ անձի անվտանգության համար կարող են սպառնալիքներ լինել: Անանուն աղբյուրների վրա հղում կատարելով՝ հաճախ հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում կամա թե ակամա հրապարակվում են պետական, ռազմական, բժշկական, մասնագիտական կամ այլ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:

7. Լրատվամիջոցների և լրագրողների գործունեությունը կարգավորող հիմնական և կարևոր օրենքներից մեկը վերաբերում է մարդու պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին հասցված վիրավորանքի և զրպարտության հարցին:

2010 թ. մայիսին վիրավորանքի և զրպարտության համար պատասխանատվության քրեական նորմերի ապաքրեականացումից հետո մեծ թվով քաղաքացիական հայցեր ներկայացվեցին դատարաններ, որոնք հիմնականում ուղղված էին լրագրողների և լրատվամիջոցների դեմ: Այդ շրջանում հայցվորները հակված էին ներկայացնելու փոխհատուցման խոշոր գումարային պահանջներ, որոնց մի մասը սկզբնական շրջանում բավարարվեց դատարանների կողմից: Թվում էր, թե պատասխանատվության ապաքրեականացումը բացասական ազդեցություն կարող էր ունենալ լրատվամիջոցների ազատության վրա: Սակայն կարճ ժամանակ անց ՀՀ Սահմանադրական դատարանը և ՀՀ Վճռաբեկ դատարանն ընդունեցին մի շարք նախադեպային որոշումներ, որոնցում կարևոր իրավական մեկնաբանություններ ու սահմանումներ տրվեցին վիրավորանքի և զրպարտության նորմերի նյութաիրավական բովանդակության և կիրառության վերաբերյալ: Այդ մեկնաբանություններն ու սահմանումներն ընդունվեցին որպես պարտադիր նշանակություն ունեցող ուղեցույցեր, դրանք սկսեցին հետևողականորեն կիրառվել դատարանների և մյուս իրավակիրառողների կողմից: Արդյունքում՝ էապես նվազեցին լրատվամիջոցների ու լրագրողների դեմ բերված հայցերն ու դատական գործերը, հաստատվեց կայուն դատական պրակտիկա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Հեղինակային իրավունքի պաշտպանության հիմնախնդիրը համացանցային լրատվամիջոցներում,** Կրթությունը և գիտությունը Արցախում, Երևան, թիվ 3-4, 2016, 8 էջ:
2. **Ինքնակարգավորման խնդիրները հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում**, Արդարադատություն, Երևան, թիվ 1 (36), 2017, 5 էջ:
3. **Քրեական «Քրոնիկոնը» և իրավական գնահատականների խնդիրը համացանցային լրատվամիջոցներում**, Արդարադատություն, Երևան, թիվ 5 (40), 2017, 4 էջ:
4. **Մեկնաբանությունների դաշտի կարգավորման խնդիրը հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում**, Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 4, 2017, 9 էջ:
5. **Ավանդական և նոր մեդիա, մրցակցություն և համակեցություն**, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, 2017, 7 էջ**:**
6. **Մոբիլոլոգիա. ազդեցությունը և հետևանքները Հայաստանում**, Կաճառ գիտական տարեգիրք, Երևան, 2017, 8 էջ:

Мартинян Инга Ваграмовна

Проблемы регулирования и саморегулирования в армянских интернет средствах информации (2010-2016 гг.)

Резюме

Ж.01.06-диссертация соискания научной степени кандидата филологических наук по специальности "Журналистика".

Защита будет проходить 22.12.2017г. в 14:30 часов на заседании профессионального совета литературоведения 012 КВК, действующего в ЕГУ, адрес: г. Ереван 25, Абовян 52а, корпус Факультета армянской филологии ЕГУ, аудитория № 202.

В работе научно исследованы особенности медиасреды, новые и действующие принципы саморегулирования, существующие проблемы и тенденции развития медиа-среды Армении в изменяющемся технологическом мире, определенные нормы международной и национальной этики для защиты потребителя от "Информационного мусора", который страдает от большого потока информации, необходимость их употребления и возможные следствия не употребления, были представлены предложения о нейтрализации опасностей, возникающих в информационной среде, об использовании международного синтезированного опыта и об усилении саморегулирующихся механизмов.

Актуальность темы обусловлена продолжительным ростом роли информационных сайтов в армянской массовой медиасреде, ростом общественного интереса к онлайн СМИ, а также многообразием проблем, до настоящего времени прямо или косвенно действующих на деятельность СМИ, обсуждением разных путей их решения. На основе объемного изучения представлено комплексное, актуальное и по возможности целостное исследование о перспективах развития и хронологии создания, о проблемах новой медиа. Обобщены экспериментальные, научные положения и положения, которые обсуждаются, распространяются в профессиональных кругах, являются спорными, предложены определенные решения существующих проблем.

Предметом исследования являются интернет-СМИ Армении, особенности их классификации, особенности производителей и потребителей информационного содержания интернета, правового и этического регулирования взаимоотношений, возникающих между ними.

Диссертация состоит из предисловия, трех глав, заключений и из списка литературы. В предисловии обоснуются выбор и актуальность темы, рассматривается степень его научной разработанности, а также обоснуется научная новизна работы. В первой главе- "Новая медиасреда: особенности и проблемы" , представлены информативно-коммуникационные технологии в эпохе интернета, понятие "Новая медиа", сфера его употребления, разнообразные мнения об определении информационных средств, международный опыт. В работе отдельным подразделом остановились на проблемы сожительства и конкуренции традиционной и новой медиа. Финансовый компонент является важным ориентиром для содержательной направленности интернет средств информации. Проблемы регулирования и саморегулирования, находящиеся в сфере исследования, тесно связаны с содержанием медиа производства, с профессиональными

качествами, которые прямо или косвенно обусловлены и финансовым фактором. Придали значение и необходимости правового регулирования интернет средств информации, с помощью чего гарантируется информационная безопасность общества, предупреждается распространение частной информации о людях, что может способствовать минимизации дезинформации, клеветы, оскорбления, плагиата.

Журналистская этика находится в поле зрения автора во второй главе- "Саморегулирование: механизмы и проблемы в армянских СМИ". Представляются существующая литература о теме, польза и проблемы в армянских и заграничных научных кругах. Говорится также об истории, определении этики, теории, функции, механизмах саморегулирования- советы прессы, омбудсмен прессы, журналистские организации и союзы, редакторская коллегия, инструкции по этике. Третья глава диссертации "Правовое регулирование интернет средств информации, международный опыт и армянская действительность", отмечает, что есть только несколько правовых актов, относящихся к интернету. Они в основном относятся к публичным и персональным уведомлениям по интернету, сообщению данных, дозволениям, условиям, тарифам предоставления услуг виртуальной доступности и т.д. Часть этих актов являются косвенными регулированиями, которые вытекают из гражданских отношений- оскорбление и клевета, авторское право и т.д. Плагиат является одним из актуальных и важных проблем в этой сфере. Проблема регулирования сферы комментарий ещё полностью не решена в армянских интернет средствах информации. В настоящее время одним из качеств, свойственных отечественной медиа, в особенности интернет средств информации, является распространение новостей со ссылками на неизвестные источники, что делает материал привлекательным, однако ставит под сомнение правоту информации. Один из главных и важных законов, регулирующих деятельность журналистов и средств информации, связан с проблемой клеветы и оскорбления, нанесенных достоинству, чести и деловой репутации. Всеми международными и внутригосударственными законами закреплено: свобода слова человека может быть ограничена в целях защиты чести и достоинства. Самой важной стороной информационных средств и журналистов является свобода слова, которая должна быть сбалансирована и в некоторых случаях быть ограничена правом личной жизни человека. Вопрос ее освещения находится в сфере правового и этического регулирования, так как в этом отношении есть пробели в законодательстве РА. Работа завершается "Заключениями" и "Списком использованной литературы".

Inga Vahram Martinyan

Problems of regulation and self-regulation in Armenian internet mass media (2010-2016)
Resume

Jh.01.06-dissertation of application of academic degree of candidate of philological sciences, specialty- "Journalism".

The defense will take place on 22.12.2017, at 14:30 in the session of 012 professional council of Literary science of CHQ acting in ESU, address: Yerevan c. 25, Abovyan 52a, housing of the Faculty of Armenian Philology of YSU, № 202 auditorium.

Characteristics of the new media area, new and acting principles of self-regulation, tendencies and problems of media area development of Armenia in technological world, defined norms of international and national ethics of defense of consumer from "Information Trash", who suffers from large flow of information, the necessity of their usage and possible results of not using have been scientifically researched, suggestions about neutralization of danger arising in information environment, usage of international complex experience and intensification of self-regulation mechanisms have been presented.

Actuality of the topic is conditioned with continuous increase of the role of media websites, increase of public interest in online mass- media, diversity of problems directly or indirectly influencing on the activity of mass-media up to now, discussion of different ways of their solving in Armenian mass-media area. The complex, actual and total research about development perspectives, problems and creation chronology of new media has been presented on the basis of dimensional research. Expertise, scientific, disputable provisions and provisions, which are discussed and are used in professional sphere, have been summarized, solutions for problems have been suggested.

Online mass-media, specialities of their classification, of producers and consumers of media content in the internet, specialities of legal and ethical regulation of their interrelations are deemed to be the subject of the research.

The dissertation consists of introduction, three chapters, conclusions and literature. The chose and actuality of the topic are grounded, its level of scientific progress is contemplated, scientific novelty of the work is grounded. Information-communication technologies in the internet era, "New Media" category, area of its usage, different opinions about definition of media, international experience have been presented in the first chapter-"New Media Area: Specialities and Problems". Problems of competition and cohabitation of traditional and new media have been presented in separate subsection of the scientific work. Financial component is an important guide of content tendency of Armenian internet media. Problems of regulation and self-regulation in the research are connected with media production content, professional qualities which are directly or indirectly conditioned with financial factor. The necessity of legal regulation of internet media have been emphasized which guaranties public information security, prevents spread of private information about people which can promote to minimization of disinformation, slander, insult, plagiarism.

Journalist ethics is defined by the author in the second chapter-''Self-regulation: Mechanisms and Problems in Armenian Mass-Media''. Literature, usefulness and problems of the topic are presented in Armenian and international scientific area. History and definition of ethics, theories, functions, self-regulation mechanisms are presented here-press councils, press ombudsman, journalist organizations and unions, editorial college, ethical instructions. The third chapter of the dissertation- ''Legal Regulation of Internet Media, International Experience and Armenian Reality'', emphasizes that there are several legal acts concerning to the internet. They are generally connected with public and individual notifications, data presentation with the internet, pricelists, conditions, allowances of service provision of virtual accessibility. Some of them are indirect regulations which is determined from civil-legal relations-insult and slander, copyright, etc. Plagiary is one of the important and actual problems in this sphere. The problem of regulation of comment area hasn't been solved in Armenian internet media. The spread of information with the reference on unknown sources is one of the qualities of Armenian media, especially of internet media which makes attractive the material, but the truthfulness of information becomes suspicious. One of the important and basic laws, which regulates journalist and media activity, is connected with the problem of insult and slander towards honor, dignity, business reputation. All international and interstate laws define: the freedom of speech can be restricted in the purpose of defense of honor and dignity. The freedom of speech and expression is deemed to be a basic component of journalist and media activity which shall balance and in some cases restrict with the right to personal life. The problem of its illustration is in area of legal and ethical regulation as there are gaps in the RA legislation. The scientific work is summarized with ''Conclusions'' and ''Literature''.